3 ➥ Կարոտը չգրված օրենքներից ամենասիրունն է: Ես կարոտում եմ քեզ, աչքերդ, ժպիտդ, բառերդ ...ամեն ինչ շուրջս քեզ է հիշեցնում, ամեն տեղ ու ամենքի մեջ միայն քեզ եմ փնտրում, միայն ու միայն քեզ: Ես սիրում ու կարոտում եմ քեզ, որովհետև այս կյանքում դու ես պարգևել ինձ կյանքի ամենամեծ երջանկությունը ու ամենապայծառ հիշողությունները: Դու սովորեցրիր ինձ ապրել քեզանով, բայց... Եթե պիտի հեռանայիր, եթե պիտի անկատար թողնեիր սիրո խոստումներդ, պիտի անպատասխան թողնեիր նամակներս ու սերս, ապա ինչու՞ քո անդիմադրելի թովչանքով գերեցիր ինձ: Ինչու՞ հեռացար կյանքից...ինչու՞ թողեցիր ինձ մենակ...

Ա՜խ, ո՛չ, դու իմ հերոսն ես, և ոչ միայն իմ, այլ՝ ողջ հայության :

Նայի՜ր, նայի՜ր շուրջդ և ինքդ կհամոզվես, որ այդպես է, նայի՜ր, այնտեղ զինակից ընկերներդ են, հրամանատարներդ, նայի՜ր այն մանչուկներին, որոնք թեկուզ փոքր, բայց զինվորական համազգեստով գոչում են. «Դու անմահ ես, զինվո՛ր... Փառք ու պատիվ քեզ, հերո՛ս»:

Սվետլանա Պետրոսյան,
լրագրություն, 2-րդ կուրս

ԱՆՈՒՆՍ ԱՐՑԱԽ Է

Երկնամերձ լեռներ, որոնց գագաթներին հանգրվանում են ամպեր թափառական, իսկ լանջերին անտառներ են՝ տնկված «ձեռքով Արայի» (նրա հոգում չէին խամրել դրախտի մասին հիշողությունները, ով իր մտքի ուժով, աշխատասիրությամբ նոր դրախտի հիմքերն էր դրել): Աղբյուրներ կարկաչուն, սառնորակ, անուշաջուր, որ բխում են այդ լեռների ստորոտներից և քարեքար թռչկոտելով դառնում են գետեր՝ աղբյուրներ լույսի, կյանք տալիս դրախտային այգիների, արտերին ծփուն:

Ժողովուրդ հպարտ, ազատատենչ, աշխատասեր, արարող: Այս է իմ հայրենին, որ նախապապիս անունով կոչվում է Արցախ:

Հող իմ հայրենի, հայ ժողովրդի ձեռամբ կերտած, դրախտային այգի՝ զավակներիդ արյամբ ու քրտինքով ոռոգված, փայլում ես ինչպես անեղծ ադամանդ: Փայլիցդ գերված մոտ ու հեռու ավարառու ցեղեր ցանկացան տիրել քեզ, խլել քեզ քո զավակներից՝ զենքով, զոռով, խաբեությամբ՝ ինչով ասես, ինչքան կարող էին: Նրանց թվում էր, թե քեզ տիրելով աշխարհին կտիրեն՝ քանզի իրենք էլ գիտեն, հասկանում են՝ դու ես աշխարհին տիրելու բանալին: Բայց նրանց, որ սեփական մտքի ուժով միայն ավերել ու ավարել գիտեն հասու չէ հասկանալ, որ քեզ տիրոջ պես սիրող, խնամող, քեզ համար կյանքը տալու պատրաստ ժողովրդից խլել անկարող են:

Դու եղել ես, կաս, կլինես ծաղկուն եդեմական այգի միայն շնորհիվ քո զավակների, որ դուք առանց մեկդ մյուսի գոյություն ունենալ չեք կարող:

Նրանց հասու չէ հասկանալ, որ քո փայլը նրանք են՝ քո սնած, քո ծոցից ելած հայորդիք, ում քո գրկում եղած արմատներն են ապահովում «տերևների ոսկին»:

Ես քո մասնիկն եմ, քո զավակը՝ հողիցդ սերված, արևովդ թրծված, պատմությանդ բովով անցած: Անունս Արցախ է...

Ռուզաննա ՍԱՀԱԿՅԱՆ,
«Մաթեմատիկա», 3-րդ կուրս

«Քո ժամանակը»
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ
Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՁՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Անժելա Շահանց, լրագրություն 2-րդ կուրս
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Քո ժամանակը

№ 9
ԴԵԿՏԵՄԲԵՐ
2021

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

«ԳԱՅԼՈՎ» ՏՂԱՆ

«Հայրենի հողդ սիրիր այնպես, որ այդ սիրուց վախենա թշնամին»: Հերոս Մոնթեի պատգամը մեր սերնդի տղաների կյանքի կարգախոսն է դարձել: 44-օրյա պատերազմը ապացույցն էր այս ասվածի, մեր սերնդակից տղաները այնպես սիրեցին մայր հողը, որ դարձան նրա հողածին զավակները: Հայրենիքի համար անմահացած հրաշունչ հերոս է նաև Արամ Մկրտչյանը:



Գայլով տղաս՝ այդպես էր նրան կոչում մայրը: Արամ Մհերի Մկրտչյան. ծնվել է քաղաք Ստեփանակերտում 2002 թ. մայիսի 5-ին: 2008 թ. ընդունվել է Ստեփանակերտի Հայկ Բալասանյանի անվան համար 5 միջն. դպրոց: 2015թ. ուսումը շարունակել է Մարտակերտի Վլադիմիր Բալայանի անվան թիվ 1միջն. դպրոցում, փետրվարին տեղափոխվել Մարտակերտի Վարդան Միհասյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց: Ուներ սպորտային բացառիկ կարողություններ, սպորտի մեծ սիրահար էր: Զբաղվում էր ազատ ոճի ըմբշամարտով: Պարգևատրվել էր պատվոգրերով և մեդալներով: Դպրոցն ավարտելուց հետո տեղափոխվել է Երևանի Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջը (ԵՕՀՊ): Ավարտելով ԵՕՀՊ-ի քոլեջը՝ 2020 թվականի հուլիսի 20-ին մեկնել է պարտադիր ծառայության Մարտակերտ քաղաքի 5-րդ պաշտպանականում: Նրա երազանքն էր դառնալ հերոս քեռու նման հետախույզ և ուներ այդ բոլոր տվյալները: Լավ ընկեր էր, չարաճճի դասընկեր: Արամի հետ միասին մի նստարանի էինք նստում: Հիշում եմ, թե ինչպես էր նստարանը գրիչով բաժանում երկու մասի և լուրջ հայացքով ասում, որ չհատեմ իր գծած սահմանը, ու եթե պատահաբար խախտում էի նրա պայմանը, քաշում էր մազերիցս: Ծննդիս օրն էլ, սեղանից հավաքում էր կոնֆետները ու լցնում գրպանը, իսկ հաջորդ օրը բերում և դասարանում հյուրասիրում: Մեր մանկական վեճերը, թվում էր, անվերջանալի են, բայց այն, ինչն ունի սկիզբ, ցավոք, ունի վերջ: Հոգատար զավակ էր և արժանի որդի: Սիրում էր անակնկալներ անել մայրիկին և ընտանիքի անդամներին: Երազում էր ունենալ մեծ ընտանիք, որտեղ պիտի շատ տղա զավակներ լինեն: Մոր հետ վերջին հանդիպումը եղել է սեպտեմբերի 19-ին:Կորոնավիրուսային բարդ շրջանում մայրը հորդորել էր որդուն, որ հանդիպումները հաճախակի չլինեն: Իսկ որդին վերջին գրկախառնության ժամանակ մոր ականջին շշնջացել էր, որ այլևս չի վերադառնալու, վատ կանխազգացում ունի, զգում է, շուտ է մահանալու: Եկավ 2020 թվականի սեպտեմբերի 27-ը: Պատերազմ: Բառ, որից ամենաշատն եմ վախենում, բառ, որը լսելուն պես մարմնիս ամեն մի բջիջով ատելություն եմ զգում: 44 չապրած օրեր, սևազգեստ դարձած մայրեր: Պատերազմը անտարբեր չանցավ նաև Արամի ընտանիքի կողքով: Մայրը պատմում է, որ որդու զոհվելու օրը երազ է տեսել, որտեղ Արամը ծխի և մառախուղի մեջ էր, ասես ինչ-որ տեղ էր շտապում:

Ընտանիքի անդամներն արդեն գիտեին, որ Արամը զոհվել է, բայց մորը հուսադրում էին, թե Արամի հետ ամեն ինչ լավ է: Չարաբաստիկ լուրն իմանալուց հետո մայրը սկսում է ամենուրեք փնտրել որդուն: Որդու դեմքն անճանաչելի էր և միակ ինքնությունը հաստատող փաստը Արամի կրծքավանդակի դաջվածքն էր՝ գայլի կերպարանքով: Ու քանի որ բժիշկները չգիտեին Արամի ով լինելը, անվան փոխարեն գրանցել են որպես գայլով տղա: Որդին չէր սիրում, երբ մայրը սև էր հագնում, նույնիսկ հաճախ սաստում էր, բայց, անկախ իր կամքից, մայրը դարձավ հավերժ սևազգեստ:

Սեպտեմբերի 27-ի առավոտյան Արամը առաջին զոհերից էր, ով մոտ 30 զինվորի հետ անօդաչուի հարվածի հետևանքով մնաց հողի տակ: Արամի հոգին հանգչում է Եռաբլուրում:

Անժելա ՇԱՀԱՆՑ,
լրագրություն 2-րդ կուրս

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻ ՌԻՏԱ ՎԱՆԵՍՅԱՆԻ «ՎԵՐՋԻՆ ԿԱՆԳԱՌ» ԳԻՐՔԸ

Լույս է տեսել ԱրՊՀ ուսանողուհի Ռիտա Վանեսյանի «Վերջին կանգառ» գիրքը: Ռիտան ստեղծագործել սկսել է վաղ տարիքից, սակայն իր ստեղծագործությունները հանրությանը սկսել է ներկայացնել 2016 թ. ապրիլից: Սովորում է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին կուրսում: «Վերջին կանգառ» գիրքը գողտրիկ սիրո մի պատմություն է, որտեղ ներկայացված են հեղինակի մտորումներն ու աշխարհընկալումը սիրո, կյանքի, մարդկային հարաբերությունների, արժեքների մասին: Շնորհավորում ենք մեր ուսանողուհուն և մաղթում նորանոր ձեռքբերումներ: Ներկայացնում ենք հատված գրքից:

ՀԱՏՎԱԾ «ՎԵՐՋԻՆ ԿԱՆԳԱՌ» ԳՐՔԻՑ

Ամենաթանկ ու կարևոր բաներն այս կյանքում դժվար են տրվում: Դու այդ ամենան ես: Ամենահիդեալականը, որ ես կարող եմ ունենալ, դու ես: Սխալ է ասված, թե իդեալական մարդիկ չկան: Ուղղակի պետք է հասկանալ, որ ում դու սիրում ես ամենախելացին չէ, ամենագեղեցիկը չէ, ամենաբարին չէ, բայց մյուսների համար, սակայն քեզ համար նա, ում սիրում ես, ամենան է, ամենահարազատ մարդը, որին դու գտար անծանոթների մեջ ու ամենամտերիմը, որին չի փոխարինի ոչ մի այլ հարազատ: Կատարյալը, ում մասին չես էլ երազել: Դու դարձար իմ թուլությունը՝ կաթիլ թուլությունը: Ես այդպես էլ չդադարեցի քեզ սպասել, քեզ որոնել: Ես քեզ փնտրում էի ամենուրեք, սակայն քո հետքն անգամ չկար:

- Մի՞թե անհետացել էիր...

Միակ տեղը, որտեղ չեմ փորձել փնտրել քեզ, ուրիշներն էին: Ես չէի փորձում քեզ փնտրել ուրիշների մեջ, չէի փորձում գտնել քեզ նմանին, քանի որ քեզ պես միայն դու ես: Ես գիտեի, որ քո հայացքից ոչ ոք չունի, քո ժպիտից ոչ ոք չունի, իսկ աչքերդ, լավ է՝ լռեմ:

- Ի՞նչ կանեիր, եթե իմանայիր, որ այն օրը ձեր վերջին հանդիպումն էր լինելու:

- Տանը միասին ֆիլմ կդիտեինք, բարձերով կճակատամարտեինք, այնպես, որ ամբողջ տունը փետուրով լցվեր, հետո մի փոքրիկ սեղանի շուրջ մթության ու մոմերի ներքո կընթրեինք: Աստղերի ներքո մինչ ուշ երեկո իրար ձեռք բռնած կքայլեինք, գլուխս կդնեի ուսին և նայելով լուսնին՝ ականջակալներով երաժշտություն կլսեինք, կարտասվեի ու կպատճառաբանեի ցուրտը, ինչն էլ ձյան տեսքով կթափվեր մեզ վրա: Ալյումինից 2 օղակ կպատրաստեինք և իբրև նշանդրեքի մատանի մեկս մյուսի մատին կդնեինք:

- Իսկ ինչպե՞ս հրաժեշտ կտայիր:

-Կկանգնեի նրա դիմաց ու սրտիս թույլ կտայի անկեղծանալ, կասեի, որ նրանից լավը, նրանից անկեղծը, գեղեցիկը, թանկն ու հարազատը երբեք չեմ ունենա: Դանդաղ կմոտենայի, կնստեի կողքին, կհամբուրեի այտն ու մի վերջին անգամ կասեի.

«Բարի գիշեր, սիրելիս»: Այդպես առաջին և վերջին անգամ կննջեմ իր կողքին:

Սիրո մասին շատ խոսել չի կարելի, սերը լռություն է սիրում: Բայց իմ սերը խուլ էր, և լռությունն էլ տանել չէր կարողանում:

Տղա: Ի՞նչ ես կարծում, ամենից շատ լո՛ւսինն ունի սիրո կարիք, թե՝ աստղերը:

Աղջիկ:Մարդիկ

ՍՊԱՍՈՒՄ ԵՄ

Ի՛մ հերոս, ի՛մ շիկահեր պատանի...

Փոքր տարիքից սովորություն ունեի թանկ մարդկանց կողմից ստացած նվերներս դնել տուփի մեջ և սրբությամբ պահել: Այս մեկն էլ բացառություն չէր...Անցել է մեկ տարի. ես ամեն ամիս այս օրը գալիս եմ քո մոտ, զգուշությամբ բացում սփոփիչ տուփը և այնտեղից հանում ինձ համար այնքան թանկ և քեզ հիշեցնող նվերը: Հիշում եմ քո խոստովանությունը...հիշում եմ այդ օրը..օրացույցի վրա այդ օրը կարմիրով եմ նշել... չէ, նրա համար չէ, որ չեմ հիշում կամ ուզում եմ հիշել, այլ ուղղակի ուզում եմ ամեն տեղ այդ օրը լինի հատուկ...անգամ օրացույցի վրա...

Սովորական օրերից ոնց այդ օրը առանձնացրի, այդպես էլ քեզ բոլորից առանձնացրի իմ կյանքում...ընդգծեցի այնպես, որ երբեք ոչ մի վայրկյան չմոռանամ քեզ... հիշում եմ...ինչպես էիր շիկնել, ինչպես էիր կենսալի շուրթերովդ արտասանում դժվարությամբ հայթայթված բառերդ, ինչպես էր քո հուզումը փոխանցվել ինձ: Եվ որպես մեր սիրո թալիսման այս մեդալիոնը նվիրեցիր ինձ: Հիշում եմ գինին, ախ գինին էր, որ ստիպում էր քեզ դյութիչ ձայնով զարմացնել ինձ: Սիրում էի գինուդ երգը, որը վերջինը եղավ:

Մենք երջանիկ էինք միասին...երջանիկ, մինչև արյունոտ սեպտեմբերի 27:

2020 թիվ...հոկտեմբեր ...

-Ձինվոր, զինվոր... դու չկաս իմ արծիվ...դու զոհվեցիր Մարտակերտի ուղղությամբ տեղակայված Ձեր դիրքը անձնազոհաբար պաշտպանելիս: Կանգնած եմ շիրմիդ առջև, արցունքներս հորդաբուխ թափվում են աչքերիցս: Աշուն է, ու օրն այնքան ամպամած է ու խավար, ինչպես քեզ կորցնելու օրը: Ա՜խ...

Այ, հիմա եմ հավատում այն ասվածին, որ բնությունը նույնպես զգայարաններ ունի: Բնությունը զգում է թախիծը, ցավը, երջանկությունը, ուրախությունը: Ես այս ամենը հասկացա այստեղ՝ քո շիրմի մոտ: Սիրտս պայթում է. մինչև հիմա չեմ համակերպվում այն մտքի հետ, որ չկաս: Սպասում եմ, սպասում եմ անդուլ, սպասում եմ քո վերադարձին: Սպասումն ասես մեծ խճանկարից մոլորակ լինի. ծվեն-ծվեն ես լինում վարկյանների ու րոպեների մեջ ու պատկերդ խախտվում է: Սպասումն անմարդկային բան է: Երևի ամենավատ անեծքը այդպես էլ կհնչվեր «հավերժ սպասումի մեջ լինես»:

Քեզ հետ կապված հիշողությունները սփոփանք են դարձել ինձ համար: Չեմ կարողանում այն պատճառով, որ սպասմանը գումարվում է անասելի և անդիմադրելի կարոտ: Ամեն անգամ միայն անունդ լսելուն պես դող ու անասելի կարոտ է զգում հոգիս, միայն կարոտի ճամփին ընկած սիրտս մղձավանջային տեղատարափի մեջ է ընկնում: Հուշ և երազ դարձար, հողդ պաշտպանելու ուղին ընտրեցիր և հավերժ հողիդ մատաղ դարձար: Ամեն անգամ նկարիդ նայելով և շիրմիդ ծաղիկները դնելով սիրտս մղկտում է: Այսօր էլ ահա այցելեցի քեզ՝ ծաղիկներ խոնարհելու: Ծաղիկներ, որոնք թացացել են ոչ թե ցողից, այլ՝ արցունքներիցս: 1 տարի է անցել, ինչ երկնքում ես, չկաս, մեզ հետ չես: Թվում է՝ պարզապես գնացել ես ու էլի հետ կգաս, այդ հույսն է, որ ինձ ապրելու իմաստ է տալիս:

➥ 4